


բուն շնորհիւ ամրադքը կուրծքը կ'աշխուժանայ շուտով։ Այս շփուած շրջանակին բարձրութիւնը Յ ափի լայնութիւն ունի։

Սկսնակները պէտք է կատարեն այս մարզանքը դանդաղութեամբ և հանդարտութեամբ։ Սխալ է դարձնել միայն գլուխը։ Ապահով ըլլալու համար թէ կիսաշրջանակը լաւ էք գծած, կրնաք կէտ մը նշանակել ձեր կոնակը՝ նայելու համար անոր։ Կամ կրնաք հայելիի մը մէջ նայիլ, հաստատ պահելու համար գլուխը։

Շնչողութեան եղանակները 16րդ վարժութեան պէս։

ՄԻՒԼԼՐ



Գ. Տ. Նէօյվէ.— Զեր երեսի բշտիկները զերմամիզութեան հետ կապ չունին։ Շարունակեցէք ձեր սկսած դարմանումը։— Երբ արկածով վէրք մը ունենաք, անխնամ մի քողուք, անմիջապէս գէր կարիի մը *teinōtēre d'iode* դրէք։ պիտի տեսնէք որ աւելի շուտ պիտի բուժուի։— *Dépuratif* կոչուած դեղերը, որոնք իրեւ թէ «արիւն կը մաքրեն» ժամանակին շատ կը գործածէին դէմքի եւ մարմնի բշտիկներու (*boissons*) դէմ։ Այդ բշտիկները յանախ կ'անհետաթային, որովհետեւ սիֆիլիսի (*ֆրանկախտի*) արդիւմք էին եւ գործածուած դեղերը տալութեալու, *iodure* եւ սմդիկ (*միվա*) կը պարունակէին, որոնք այդ ատեն սիֆիլիսի դէմ գործածուած ամէնէն զօրաւոր դեղերն էին։ Բայց որովհետեւ սիֆիլիսին էութիւնը այն ատեն անծանօք էր, կը կարծուէր թէ բշտիկները արիւնի «անմաքուր» ըլլալէն առաջ կուգային եւ դեղերն ալ կ'ազդէին արիւնը մաքրելով (*dépuratif* կը նշանակէ «մաքրող»)։ Ահա այդ ատենէն մնացած է «արիւն մաքրող» դեղերու գործածութիւնը, որոնք այժմ յանախ բան մըն ալ չեն մաքրեր…

Ա. Գ. Սէն Շամօն.— Ոտքին ցաւին տեսակները եւ պատճառները բազմաթիւ են։ Անկարելի է առանց տեղական եւ ընդհանուր քննութեան կարծիք մը յայտնել։ Զեր բացատրութիւնները խորեիլ կուտան թէ քերեւս *pied-plat* (տիւզ-տապան). ովնիք, որ շատ ցաւ կը պատճառէ. կարելի է ամոքել կօշիկին մէջ կրելով մասնաւոր գործիք մը։ Հետաքրքրական է գիտնալ թէ ինչ արդիւմք տուաւ մառագոյքներով (ռատիօ) քննութիւնը։— «Ալպիւմին»ը բնայ յառաջ գալ երիկամութիւնի հիւանդութենէ կամ կազմի ընդհանուր տկարութենէ։ դարմանումը կախում ունի պատճառէն։

Ա. Գ. Փարիզ.— Մէզին մէջ գտնուող քելերու (*filament*) նշանակութիւնը կախում ունի իրենց տեսակէն, մանրադիտական կազմէն, եւայլն։ Պէտք է քննել։ Գիշերը միզելու պէտքը ընդհանրապէս յառաջ կուգայ շագանակագեղակի արիւն-

Խոնումէն, ուռելէն։ Զեր պարագային մասին կարծիք մը չեմ կրնար յայտնիլ առանց բնուրքեան։

Ա. Պ. Փարփակ. — Իրիկութեները քերեւ նաշեցէք. պառկելու ատեն ցերեկուան բոլոր զգեստները հանեցէք եւ միայն գիշերամոց մը հագէք. ծածկոցները պակսեցուցէք։ — Պնդութեանք մասին «Բուժանք»ի նախորդ հարցարանները կարդացէք եւ եղած քելադրութիւնները գործադրեցէք։ Կան մասնաւոր պարագաներ ուր պէտք կ'ըլլայ նառագայքներով բննուրիւմ մը։

Յովհաննէս. Մարսէյլ. — 6-7 կրամ նէկօվլվարսան եւ միեւնոյն ատեն տասը հատ արգուերտօն (շաբաթը մէկ ամգամ ընել տուէք։ — Երբ յդի մնայ այն ատեն կամխազգուշական դարմանում մը ընել կուտաֆ։

Ա. Փարփակ. — Բնածխային քրուուտով (oxyde de carbone)ուր կամ քրոմիկ քումաւորումներ յանախ կը պատահիմ, օդային կազի կամ գէշ վառող կրակարանի պատմառով։ Hypostulfite de soude ի կամոնաւոր գործածութիւնը կրնայ կամխարգելիչ միջոց մը ըլլալ. բայց լաւագոյն միջոցն է օդային կազի ծորակները միշտ ուշադրութեամբ գոցել եւ վառարաններում վրայ հսկել։

Ա. Գ. Արէնֆ. — Կուածը (համի, tatouage) անհետացնելու համար քագմաքի միջոցներ յանձնարարուած են։ Երէ կ'ուզէք փորձեցէք հայ կնոջ մը գործադրած հետեւեալ միջոցը, զոր Ամերիկացի քծիշկ մը կը պատմէ (Archiv of Dermatology թերթին մէջ։ Այդ կինը լեմոնի ջուրով կրկին կտածել տուած է կապոյտ կտածները եւ քանի մը փորձերէ վերջ յաջողած է զանոնի անանչմար դարձնել։

Կ. Դ. Լիօմ. — Ընկերային Ապահովագրութեանց օրէնքին մասին պիտի գրենք, երբ օրէնքը վերջնականապէս բուկարկուի։ Մինչեւ գործադրութեան դրուիլը, հաւամարար շատ մը փոփոխութիւններ պիտի կրէ։

Վ. Սայտա. — Երէ ականջի քմբուկը պատռած է, բայց բորբոքում ու քարխ չկայ, տեղական դարմանի պէտք չկայ։ Իսկ երէ քարախ կը հռսի, մասնագէտ մը պէտք է դարմանէ։ Երկու պարագային ալ ֆիքը բննել եւ դարմանել տուէք։

Ա. Ա. Մարսէյլ. — Ծխելու մոլութենէն ազատելու համար կրնաք հետեւեալ միջոցը փորձել։ Դեղագործէ մը ուզեցէք հետեւեալ լուծոյթը Solution de nitrate d'argent à 1 p. 1000-1 litre. ամէն ամգամ որ ծխելու փափաք ունենաք, նախ ճեր քերանքողեցէք այս ջուրով եւ յետոյ ծխեցէք։ Ընդհանրապէս գէշ համ մը պիտի զգաք, որ հետզհետէ ճեղ պիտի զգուեցնէ ծխախոտէն։

Գ. Հոմս. — Մօր կարը աւելցնելու համար կան կարգ մը դեղեր (օրինակ, Lactogol, եւայլն) զորս կրնաք գործածել, բայց անոնց ազդեցութիւնը ընդհանրապէս ժամանակաւոր է։ Երէ մայրը կազմով տկար է, պէտք է լաւ սննումն տալ, մանաւանդ ընդեղէններ, նաև առանց ալքոլի գարեջուր (bière des nougatines)։ Երբեմն մօր կարի նուազ ըլլալուն պատմառը ծծկանն է, որ լաւ չի կրնար ծծել եւ կարը քերել։

.... Եափա. — Շագանակագեղձի մարձումի պէտք ունիք։